ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

Հետազոտության թեման՝	**Բանավոր խոսքի զարգացումը բանավեճի մեթոդի միջոցով**
Հետազոտող ուսուցիչ՝	**Ֆեդորա Սաֆարյան**
Դպրոցը՝	**«Հայկավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ**
Մենթոր ուսուցիչ՝	**Արմենուհի Անտոնյան**

Արմավիր 2023

Բովանդակություն

Նախաբան……3

Կրտսեր դպրոցականների բանավոր խոսքի զարգացման
առանձնահատկությունները..... 4
Հետազոտական համատեքստ/գրականության ակնարկ……..7

Գործնական համատեքստ……9

Հետազոտության ընթացք……11

Տվյալների մշակում և վերլուծություն……24
Ամփոփում/եզրակացություն……..27

Գրականության ցանկ……28

Նախաբան

Թեմայի արդիականությունը՝

Երեխայի խոսքի զարգացումը տարրական դասարաններում մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկն է: Խոսքի զարգացման շնորհիվ է տեղի ունենում կրտսեր դպրոցականի սոցիալականացումը, հոգեկան զարգացումը, մտածողության զարգացումը: Խոսքի զարգացման խնդիրներից առավել կարևորվում են երեխաների կապակցված խոսքի զարգացումը, քանի որ կապակցված խոսքը մտավոր գործունեության բարձրագույն ձևն է և դրա զարգացման աստիճանով որոշվում է երեխայի խոսքային և մտավոր զարգացման մակարդակը: Արդի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց երեխաների առօրյայի անբաժան մասն են կազմում համակարգիչները, համակարգչային խաղերը, որոնք չեն ուղեկցվում խոսքային հաղորդակցմամբ: Կրտսեր դպրոցական տարիքի երեխաները մեծ դժվարություններ են ունենում շփման, հաղորդակցման գործընթացում, նրանք հաճախ խոսում են առանց զգացմունքայնության, նրանց մոտ գրեթե բացակայում են գիտական խոսքի մշակույթի նորմերին ու օրինաչափություններին համապատասխան խոսքը:

Թեմայի նպատակը՝ Զրույց-բանավեճի մեթոդը, որպես բանավոր խոսքի զարգացման միջոցի ուսումնասիրում: Երեխաների մեջ ընկերական միջավայրի ստեղծումը, մտքերը վերարտադրելու, լսելու կարողության ձևավորում:

Թեմայի խնդիրները՝

- Ուսումնասիրել կրտսեր դպրոցականների բանավոր խոսքի զարգացման առանձնահատկությունները:
- Ներկայացնել կրտսեր դպրոցականի բանավոր խոսքի զարգացման սկզբունքներն ու մեթոդները:
- Բացահայտել բանավեճի մեթոդը որպես խոսքի զարգացման միջոց:

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանավոր խոսքի ուսուցումը կարելի է համարել լեզվի ուսուցման առաջնահերթ և ամենակարևոր խնդիրներից, ինչպես նաև այն ընդհանուր ուսուցման հիմնաքարն ու չափանիշներից մեկն է: Աշակերտի բանավոր խոսքի զարգացումը մայրենի լեզվի դասավանդման ամենակենտրոնական հարցերից է: «Մտքի հարստության համար անհրաժեշտ է խոսքի հարստություն: Խոսքը կառուցվում է բառապաշարով, ժողովրդական աֆորիզմներով ու դարձվածքներով, քերականական ձևերով, ոճական հնարքներով»: [1] Մեր հետազոտության ընթացքում բացահայտեցինք, որ հատկապես տարրական դասարանների աշակերտները գրական լեզվի նորմերին համապատասխան բանավոր խոսք կառուցելիս թերանում են: Այստեղ առաջին հերթին հաղորդակցման խնդիրն է: Ուսուցման ընթացքում հատուկ ուշադրության է արժանի վերոնշյալ խնդիրը, այնուհետև պետք է աշխատել երեխաների ինքնուրույն մտածողության և երևակայության զարգացման վրա: Կարևոր է նաև բանավոր խոսքի մաքրության հարցը հենց ուսուցմառության սկզբից: Այն պիտի կառուցված լինի գրական լեզվի օրինաչափություններին համապատասխան՝զերծ օտարաբանություններից, բարբառայնությունից:

Պրոֆեսոր Ա. Տեր-Գրիգորյանը նշում էր, որ աշակերտի խոսքը ձևավորվում է երեք օջախներում՝ տանը, դպրոցում և հասարակական միջավայրում Նայած թե երեխան խոսքային ինչպիսի միջավայրում է մեծանում, ինչ է լսում նա իր մեծերից տանը, փողոցում, կինոյում, թատրոնում, ըստ այդմ էլ ձևավորվում է նրա խոսքը: [2] Գաղտնիք չէ, որ շրջապատից հաճախ երեխայի խոսք են թափանցում գրական լեզվում չընդունված բառեր ու արտահայտություններ, և դպրոցում պետք է ուղիներ փնտրել այդ խնդիրները մանկավարժորեն լուծելու համար: Հասարակական միջավայրում մաքուր գրական լեզվի համար պայքարն ունի համընդհանուր նշանակություն: Իսկ հասարակական միջավայրի մարդիկ երեկվա երեխաներն են, ուրեմն պետք է սկսել երեխաներից: Տանը, դպրոցում, ամենուրեք պետք է հետևողական ու կազմակերպված աշխատանք տանել 5 երեխայի խոսքի զարգացման ուղղությամբ: Չպետք է մոռանալ, որ երեխայի լեզվական գիտելիքներով է պայմանավորված նաև մյուս առարկաների հաջող ուսումնասիրումը: Մայրենի լեզվի տարրական դասընթացի հիմնական նպատակներից մեկն էլ գրական կենդանի լեզվի ուսուցումն է, աշակերտի մեջ խոսքի կուլտուրայի մշակումն ու զարգացումը, որովհետև առանց մայրենի լեզվի տիրապետման հնարավոր չէ պատկերացնել ու իրականացնել երեխայի լիարժեք կրթությունն ու դաստիարակությունը: Լեզվի մեջ և լեզվի միջոցով է, որ երեխան շրջապատի, բնության ու հասարակության մասին ստանում է այն տեղեկություններն ու գիտելիքները, որոնք անհրաժեշտ են մարդուն այդ բնության ու հասարակության մեջ ապրելու, աշխատելու և պայքարելու համար:

Խոսքի զարգացման համար երեխայի կրտսեր դպրոցական տարիքը անփոխարինելի մի ժամանակաշրջան է։ «Այս տարիքում երեխան, երբեմն իր համար էլ աննկատելի կերպով, հազարավոր նոր բառեր, արտահայտություններ է սովորում, ընկալում է լեզվի այն հիմնական ատաղձն ու յուրահատկությունները, որը հաճախ շատ մեծ ջանքերի գնով է հաջողվում չափահաս մարդկանց»։ [3] Դասավանդման ընթացքում այս հանգամանքը պետք է հաշվի առնի ուսուցիչը և տարրական դասարանները դարձնի երեխայի խոսքի զարգացման հիմնական օղակ, մայրենի լեզվի բառապաշարի հիմնական ֆոնդի ուսուցման ժամանակաշրջան։ Առհասարակ ուսուցման ողջ համակարգի նպատակը երեխայի ընդհանուր զարգացումն է, որն առաջին հերթին իրականացվում է խոսքի միջոցով և արտահայտվում է խոսքի մեջ։ Հենց այդ առումով էլ աշակերտի խոսքի զարգացումը մայրենի լեզվի տարրական դասընթացի կարևորագույն խնդիրներից մեկը պետք է դարձնել։

Բանավոր խոսքն արտահայտչականությամբ ու հուզականությամբ ավելի բնական, կենդանի, տպավորիչ ու ազդեցիկ է, քան գրավոր խոսքը, որը, ճիշտ է, ավելի մշակված, հղկված ու կատարյալ է, սակայն ինչպես որոշ մեթոդիստներ են ասում՝ մի տեսակ «արհեստական, ձեռքբերովի լեզու է» և մարդ այն տիրապետում է մեծ ջանքերի ու հետևողական աշխատանքի շնորհիվ։ [4] Սակայն նույնիսկ այդ դեպքում գրավոր խոսքի տիրապետման հիմնական 6 միջոցը մնում է բանավոր խոսքը, որովհետև այն հենվում է բանավոր խոսքի վրա։ Բանավոր խոսքը պետք է լինի անմիջական, ունենա բարձր արտահայտչականություն, ճիշտ արտահայտի մարդկային հույզերը, ապրումները տրամադրություններն ու զգացմունքները։ Վերը նշված բանավոր խոսքին առաջադրած պահանջներին տարրական դասարանի աշակերտների բանավոր խոսքն այնքան էլ չի համապատասխանում։ Աշակերտների բանավոր խոսքի զարգացմանը ուշադրություն դարձնելիս պետք է շեշտը դնել հենց այս առանձնահատկությունների զարգացման վրա, զարգացնելով երեխայի ստեղծագործական մտածողությունը, ձևաբանական իրողությունների գրական ճիշտ նորմերին տիրապետելը։ Տարրական դասարանի աշակերտների բանավոր խոսքի զարգացման համար բացառիկ կարևոր ուղենշային դեր ունի ուսուցչի խոսքը, որը դիտվում է իբրև կենդանի, զարգացող ու ծավալվող, երեխայի հոգու հետ հաղորդակցվող, նրա հետաքրքրություններին ու որոնումներին բավարարություն տվող խոսք, որովհետև բնական ձևով արտասանվող կենդանի ու անմիջական խոսքն ավելի խորն է ազդում մարդու վրա, քան կարդացածը։ Ընդ որում, Ջ. Գյուլամիրյանը,կարևորելով այս հարցը, գրում է, որ տարրական դասարաններում մայրենի լեզվի դասերին պետք է խուսափել տեսական կանոնների և սահմանումների, քերականական իրողությունների բերանացի շարադրումից, որոնք աշակերտներից պահանջում են միայն լսել, ընկալել և նույնությամբ վերարտադրել։ [6] Այս առումով ուսուցչի խոսքը պետք է լինի պարզ, հստակ, մատչելի ու գրավիչ, որպեսզի երեխաներին տանի իր հետևից, սիրել տա մեր լեզուն։ Տարրական դասարանների աշակերտների բանավոր խոսքի զարգացման համար կարևոր նշանակություն ունեն զրույցները։ Երեխաների դպրոց գալու առաջին իսկ օրից սկսած ուսուցիչը նրանց հետ

զրուցելու բազմաթիվ առիթներ է ունենում։ Սկզբնական շրջանում այդ զրույցը կարող է պարզ հարց ու պատասխանի բնույթ կրել, իսկ հետագայում աշակերտների գիտելիքների ընդարձակմանը և բառապաշարի հարստացմանը զուգընթաց, այն կարող է աստիճանաբար վերածվել ակտիվ, երկկողմյան զրույցի։ Չափազանց կարևոր է երեխաների մեջ սկզբից ևեթ մշակել սեփական խոսք կառուցելու կարողություն, լեզվական ճաշակ ու լեզվազգացողություն, իսկ 7 դրա համար պետք է միշտ ազատություն տալ երեխային մտածելու և խոսելու՝ հետևելով նրա խոսքի գրագիտական ճշտությանը։

Երեխաների խոսքի զարգացումը ոչ միայն մայրենի լեզվի ուսուցչի, այլև մնացած բոլոր ուսուցիչների ու ամբողջ մանկավարժական կոլեկտիվի հոգածության առարկան պետք է լինի։ Սխալ խոսելիս աշակերտին պետք է ուղղել ամեն տեղ և ամենուրեք, որպեսզի նա ինքն իր լեզվի նկատմամբ մշտական հսկողություն սահմանիև խոսի այնպես, ինչպես պահանջվում է։

Այսպիսով, բանավոր խոսքը ոչ միայն մարդու զարգացած լինելու հիմնական չափանիշներից է, ամենօրյա հաղորդակցման միջոցը, այլև գրավոր խոսքի զարգացման հիմքերի հիմքը, որը պետք է զարգացնել՝ ելնելով սովորողի տարիքային առանձնահատկություններից։

Հետազոտական համատեքստ

Հանրահայտ է, որ արդյունավետ ուսուցում կազմակերպելու և աշակերտների բանավոր խոսքը զարգացնելու հարցում մեծ նշանակություն ունի խոսքի զարգացման սկզբունքների ու մեթոդների իմացությունն ու համապատասխան գործադրումը: Խոսքի զարգացման հիմնական սկզբունքներից է խոսքի և մտածողության միասնությունը, բանավորի և գրավոր խոսքի փոխադարձ կապը: Ուսուցման կարևոր մեթոդներից մեկն էլ Կոմենսկին համարում էր բանավեճը: Այս մեթոդը տարբեր չափերով ու ձևերով նա կիրառելի էր համարում ուսումնառության բոլոր աստիճաններում: [1]Դեռևս հնուց փիլիսոփաները հավաստում էին, որ բանավեճը ճշմարտության հասնելու լավագույն եղանակն է: Անկախ տարիքից, կրթությունից, նախասիրություններից բանավիճելը շատ հետաքրքիր, զարգացնող և ուսուցանող միջոց է եղել և շարունակում է մնալ: Սակայն թող չթվա, թե բանավիճելը շատ դյուրին է, պարապ մարդու զբաղմունք: Բոլոր մարդիկ չէ, որ տիրապետում են բանավիճելու մշակույթին, բոլորը չէ, որ կարողանում են լսել զրուցակցին, կարողանում են քննադատություն կամ առարկություն ընդունել 8 սեփական տեսակետի վերաբերյալ: Ուստի շատ կարևոր է սովորողի մոտ բանավեճի մշակույթը զարգացնել վաղ տարիքից:

Բանավեճի գլխավոր նպատակը իմացական հետաքրքրության խթանումն է: Այն ուղղված է սովորողների կողմից նոր գիտելիքների ձեռքբերմանը, սեփական դիրքորոշում արտահայտելուն, կարծիքի ամրապնդմանը, այն պաշտպանելու կարողության զարգացմանը:Այստեղ շատ կարևորվում են յուրաքանչյուրի առանձին կարծիքն ու հայացքները և հարգալից վերաբերմունքը մյուսների կարծիքների նկատմամբ: Պետք է ընտրել բանավեճի թեմա, որը պետք է լինի հետաքրքիր և գրավիչ: Ընտրված թեմայի շուրջ բանավեճը պետք է խթանի աշակերտների մտածելու և հետազոտելու կարողությունները:

Բանավեճը վարողը (ուսուցիչը կամ աշակերտը) հարցերի միջոցով պետք է նրբանկատորեն բանավեճի մասնակիցներին ուղղորդի՝ պահպանելով արտահայտվելու հավասար պայմաններ: Բանավեճի կազմակերպման քայլերն են.

- ներկայացնել բանավեճի թեման (շահեկան է փակցնել պատին) և դրա հետ առնչվող հրավիրված մարդկանց,
- հստակեցնել բանավեճի սահմանները, ոլորտներն ու ուղղությունները, ⎫
- ներկայացնել կանոնակարգը,
- փոքրաձավալ խոսքով հաղորդել այն ներածական տեղեկատվությունը, որը կօգնի մասնակիցներին, նրանց կմղի խոսակցության, այսինքն՝ կխթանի բանավեճի ընթացքի անկեղծությունը:

Բանավեճի կանոններն են.

- չշեղվել թեմայից,

- պահպանել սահմանված ժամանակակարգը,
- հարգել միմյանց կարծիքը,
- մասնակիցների համար ստեղծել հավասար պայմաններ,
- ուշադիր լսել և մասնակցել քննություններին,
- լինել հանդուրժող այլոց կարծիքների նկատմամբ:

Բանավեճ կարելի է անցկացնել ինչպես նույն դասարանի աշակերտների այնպես էլ, զուգահեռ դասարանների միջև: Սասնակից խմբերի կենսափորձն ու գիտելիքների մակարդակները պիտի միևնույնը լինեն:

Բանավեճը տալիս է երևույթները նոր և այլ տեսանկյուններից դիտարկելու հնարավորություն, նպաստում է հաղորդակցական կարողության զարգացմանը, իսկ գիտելիքների, տեսակետների և համոզմունքների փոխանակումն օգնում է սովորողների հայացքների, համոզմունքների փոփոխությանը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Հետազոտությունն իրականացնելու եմ Հայկավանի միջնակարգ դպրոցի, 4-րդ դասարանում մայրենիի դասաժամին: Հետազոտության մեթոդ ընտրել եմ զրույց-բանավեճ:Մեր հետազոտության նպատակն է՝ զրույց-բանավեճի մեթոդի միջոցով բանավոր խոսքի զարգացման բացահայտումը: Հետազոտությունն իրականացնելու եմ <Օջախի հիմքը>՝ Բառի ուղիղ և փոխաբերական իմաստը դասի ընթացքում: Ընտրել եմ երկու դասաժամ:

2 դասաժամերի համար ընտրել եմ դասի տարբեր տիպեր՝

1. Նոր նյութի հաղորդման դաս
2. Հարցման դաս

Խթանման փուլում կբացահայտեմ նոր նյութի վերաբերյալ աշակերտների ունեցած գիտելիքները, կակտիվացնեմ նրանց՝ ներգրավելով քննարկվելիք նյութի մեջ,որը ինչպես ասացի կիրականացնեմ զրույց-բանավեճի միջոցով, կառաջացնեմ շահագրգռվածություն և ձգտում գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելու համար: Իմաստի ընկալման փուլում կհաղորդեմ նոր նյութի տեղեկատվությունը և գաղափարը, որով էլ կշաղկապեմ հին նյութին: Կշռադատման փուլում աշակերտները, արդեն յուրացրած նոր գիտելիքները, կդարձնեն սեփականը և դրանք կկիրառեն ու կարտահայտեն իրենց բառերով ու ձևակերպումներով:

Աշխատանքը կանցկացնեմ համագործակցային խմբերով:

Նախատեսել եմ դասի սկզբում կազմակերպել զրույց-բանավեճ, որի ընթացքում նախ աշակերտներին կներկայացնեմ զրույց-բանավեճի կանոնները և հարցերը, որոնք պետք է քննարկվեն աշխատանքի ընթացքում: Դասարանում սովորում են 17 աշակերտներ, 1-ին դասաժամին բաժանելու եմ երեք խմբի, երկու խմբում 6 աշակերտներ, մեկ խմբում 5 աշակերտներ: Երկրորդ դասաժամին կփոխվեն խմբերը, ըստ իրենց ընտրած հասկացությունների շուրջ քանի հոգի կխմբավորվեն:

Ուսուցումը կազմակերպելու եմ ԽԻԿ համակարգով, որը նպաստում է աշակերտների քննադատական մտածողության, ինքնուրույն եզրահանգումներ անելու ունակության, ստեղծագործական և բանավոր խոսքի զարգացմանը: Խթանման փուլում կբացահայտեմ նոր նյութի վերաբերյալ աշակերտների ունեցած գիտելիքները, կակտիվացնեմ նրանց՝ ներգրավելով քննարկվելիք նյութի մեջ, կառաջացնեմ շահագրգռվածություն և ձգտում գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելու համար: Իմաստի ընկալման փուլում կհաղորդեմ նոր նյութի տեղեկատվությունը և գաղափարը, որով էլ կշաղկապեմ հին նյութին: Կշռադատման փուլում աշակերտները, արդեն յուրացրած նոր գիտելիքները, կդարձնեն սեփականը և դրանք կկիրառեն ու կարտահայտեն իրենց բառերով ու ձևակերպումներով:

Խմբային աշխատանքի գնահատումը կարելի է կազմակերպել փոխադարձ գնահատման և ինքնագնահատման միջոցով, որոնց համար կգծվեն սանդղակներ:

Խմբերի բոլոր աշակերտները պետք է կարողանան արտահայտել իրենց կարծիքը, կարողանան հակադրվել միմյանց և իրականացնեն բանավեճ տրվող հարցերի շուրջ:

Այդ երկու դասերից, իմ կիրառած մեթոդց և պլանավորումից ես ակնկալում եմ, որ աշակերտներս՝

- Կզարգացնեն բանավոր խոսքը
- Փաստանակտրոդացած տեքստի բովանդակությունը
- Կկարողանան վարժ կարդալ և պատմել ը դասանյութը
- Կիմանան և կարժևորեն օջախի դերը իրենց կյանքում
- Փաստանատեքստում նկարագրված իրադարձությունների միջև առկակապերը

Հետազոտության ընթացք

Ինչպես արդեն նշել էի, հետազոտական աշխատանքը անցկացրի 4-րդ դասարանում՝ մայրենիի դասաժամին:

Առաջին դասին իրականացրեցի զրույց-բանավեճ «**Մարդիկ երջանիկ են իրենց ընտանիքում:Երբևէ մտածե՞լ ես, թե ինչու…**», որի նպատակն էր սովորողների մոտ ձևավորել ընտանիքի կարևորության հարցը և զարգացնել բանավոր խոսքը:

Նախ ներկայացրեցի զրույց-բանավեճի կանոնները.

- չշեղվել թեմայից,
- պահպանել սահմանված ժամանակակարգը,
- հարգել միմյանց կարծիքը,
- մասնակիցների համար ստեղծել հավասար պայմաններ,
- ուշադիր լսել և մասնակցել քննարկումներին,
- լինել հանդուրժող այլոց կարծիքների նկատմամբ:

Ներկայացնելուց հետո նախապես կընտրենք 5-6 հասկացություն, որոնք հնարավոր է կարևորեն սովորողները՝ ընտանիքում երջանիկ լինելու համար՝ պարտադիր դրանցից մեկը պետք է լինի «սեր» հասկացությունը, և դրանց անվանումները գրել առանձին թղթերի վրա: Հաշվի առնելով խմբում սովորող երեխաների թիվը՝ հասկացությունները կկրկնվեն 2-3 անգամ:

Սովորողները վերցնում են 1-ական թերթիկ և ըստ թղթի վրա գրված հասկացության՝ բաժանվում են 2-4 հոգանոց խմբերի:

Կարելի է ընտրել հետևյալ հասկացությունները՝



Եվ տալ հետևյալ հարցերը՝

- Ի՞նչ եք հասկանում երջանկություն և սեր ասելով
- Ընտանիքում երջանիկ լինելու համար դուք, որ հասկացությունը կընտրեք՝ սեր, հաջողություն, հարստություն, համերաշխություն, հարգանք, պատասխանատվություն
- Հիմնավորիր այս տրված հասկացություններից, որն է ամենակարևորը երջանիկ լինելու համար
- Ինչու՞ եք ընտրել հաջողությունը
- Ինչու՞ եք ընտրել հարստությունը
- Ինչու՞ եք ընտրել համերաշխությունը
- Ինչու՞ եք ընտրել հարգանքը
- Ինչու՞ եք ընտրել պատասխանատվությունը
- Ինչու՞ եք ընտրել սերը

Խմբերի սեղաններին դնել վերոնշյալ հասկացությունները ներկայացնող բառերը։

Յրաքանչյուր խումբ, աշխատելով 4-5 րոպե պետք է ներկայացնի իր հասկացությունը՝ փորձելով ամեն կերպ հիմնավորել, որ այն ամենակարևորն է ընտանիքում երջանիկ լինելու համար:

Խոսքը սկսել հենց այս բառերով՝ **«Համերաշխությունն ամենակարևորն է,** քանի որ…», կամ պատմել մի այնպիսի պատմություն, հեքիաթ, որը կհամոզի, կհուզի, կզարմացնի մյուս խմբերին: Կարևոր է հետևել բանավեճի հիմնական կանոններին՝ նշված հասկացությունների դերը, արժեքը ընտանիքի երջանկության գործում, խոսել ըստ էության և այլն:

Սովորողներին նախապես հրահանգել.

Շատ ուշադիր լսեք բոլոր հասկացությունների վերաբերյալ խմբերի ներկայացումները, քանի որ վերջում կատարելու եք ընտրություն՝ պարտադիր տեղափոխվելով որևէ այլ խումբ: Ոչ ոք իր խմբում մնալ չի կարող:

Միասին հաշվում ենք, թե որ հասկացության շուրջ քանի հոգի խմբավորվեցին և ամփոփեցի յուրաքանչյուր երեխայի կատարած ընտրությունը:

Առաջին խմբից Աբրահամը, Մանեն և Մարիաննան ընտրել էին **հաջողություն** հասկացությունը, որի վերաբերյալ հայտնեցին իրենց կարծիքը, իսկ մյուս խմբից Անահիտը, Սահակը, Ռաֆիկը, Հրաչյան և Անին դեմ էին արտահայտվում և ընտրել էին **սեր** հասկացությունը, երրորդ խմբից Նարեն, Հովհաննեսը և Լիլիթը ընտրել էին **պատասխանատվություն** հասկացությունը և նույնպես հակադրվում էին մյուսների կարծիքներին: Վերջում բոլորը հայտնեցին իրենց կարծիքները և կատարեցին վերլուծություն ամեն կարծիքի շուրջ:

Հաջորդ դասին հրահանգեցի շատ ուշադիր լսեք բոլոր հասկացությունների վերաբերյալ խմբերի ներկայացումները, քանի որ վերջում կատարելու եք ընտրություն՝ պարտադիր տեղափոխվելով որևէ այլ խումբ: Ոչ ոք իր խմբում մնալ չի կարող:

Միասին հաշվում ենք, թե որ հասկացության շուրջ քանի հոգի խմբավորվեցին և ամփոփեցի յուրաքանչյուր երեխայի կատարած ընտրությունը:

Այս դասաժամին տեսանք բավականին տարբերություն, իրենց կարծքները արտահայտեցին խմբերի գրեթե բոլոր երեխաները:Կարողացան ավելի հստակ արտահայտել իրենց կարծիքները և կարողանում էին հստակ հարցեր ուղղել միմյանց և կատարել ճիշտ վերլուծություններ:

Խմբերից յուրաքանչյուրը ներկայացրեցին իրենց կարծիքները և ընտրած հասկացությունները: Հետաքրքիրն այն էր, որ նույն խմբի անդամները ևս ունեին տարբեր կարծիքներ: Նախորդ ժամին արտայատված երեխաները իրենց նույն կարծիքին էին, իսկ մյուս երեխաներից Մարիամը, Մարիան, Սաշան և Ազատը ընտրել էին **հարստությունը, հարգանքը, հաջողություն** հասկացությունները և հայտնեցին իրենց կարծիքները յուրովի մեկնաբանությամբ:

Դասն ամփոփեցինք հետևյալ հարցով. Ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ է պատմվածքը տեղ գտել <<Այ քեզ բան, ինչ կա-չկա, ինչ երևում – չի երևում՝ հայ-րե-նիք է>> խորագրով թեմատիկ խմբում:

Այսպիսով, պատմվածքը սովորեցնում է, որ ընտանիքի հիմքը սերն է: Քո դասարանն էլ մի մեծ ընտանիք է, ուրեմն պետք է սիրել և հարգել միմյանց:

Տպագրների մշակում և վերլուծություն

Այս երկու դասերի հետազոտությունները ինձ հնարավորություն տվեցին վերլուծել կատարված աշխատանքը:

Հետազոտական աշխատանքի նպատակն էր զրույց-բանավեճի մեթոդը, որպես բանավոր խոսքի զարգացման միջոցի ուսումնասիրում: Երեխաների մեջ ընկերական միջավայրի ստեղծումը, մտքերը վերարտադրելու կարողության, լսելու կարողության ձևավորում:

Երկու դասաժամերը ամփոփելով տեսանք բավականին տարբերություն, երկրորդ դասաժամին իրենց կարծքները արտահայտեցին խմբերի գրեթե բոլոր երեխաները: Կարողացան ավելի հստակ արտահայտել իրենց կարծիքները և կարողանում էին հստակ հարցեր ուղղել միմյանց և կատարել ճիշտ վերլուծություններ:

Խմբերից յուրաքանչյուրը ներկայացրեցին իրենց կարծիքները և ընտրած հասկացությունները: Հետաքրքիրն այն էր, որ նույն խմբի անդամները ևս ունեին տարբեր կարծիքներ: Նախորդ ժամին արտայատված երեխաները իրենց նույն կարծիքին էին, իսկ մյուս երեխաներից Մարիամը, Մարիան, Սաշան և Ազատը ընտրել էին հարստությունը,հարգանքը,հաջողություն հասկացությունները և հայտնեցին իրենց կարծիքները յուրովի մեկնաբանությամբ:

Աշակերտներ	Մեր	հարստություն	հաջողություն	հարգանք	համերաշխություն	պատասխանատվություն
Մանե			+			
Նարե						+
Անահիտ	+					
Սահակ	+					
Հովհաննես						+
Էլիզաբեթ						+
Ռաֆիկ	+					
Աբրահամ			+			
Հրաչյա	+					
Անի	+					
Մարիաննա			+			

Իսկ վերջում բոլորը համախմբվեցին և եկան մի ընդհանուր գաղափարի շուրջ, որ ամենակարևորը ընտանիքում երջանիկ լինելու համար **սերն** է:



Տվյալ սանդղակում ներկայացված էր խմբերի առաջին ու երկրորդ օրվա խոսքի զարգացման մակարդակի բարձրացման տոկոսային հարաբերությունը:

Ամփոփում/եզրակացություն

Ինչպես արդեն ասել էի իմ աշխատանքում բանավոր խոսքի ուսուցումը կարելի է համարել լեզվի ուսուցման առաջնահերթ և ամենակարևոր խնդիրներից, ինչպես նաև այն ընդհանուր ուսուցման հիմնաքարն ու չափանիշներից մեկն է: Աշակերտի բանավոր խոսքի զարգացումը մայրենի լեզվի դասավանդման ամենակենտրոնական հարցերից է:

Այդ բոլոր դասերի անցկացման և հետազոտման արդյունքում ես հասա իմ սահմանած նպատակներին, որոնք էին՝ զրույց-բանավեճի մեթոդը, որպես բանավոր խոսքի զարգացման միջոցի ուսումնասիրում: Երեխաների մեջ ընկերական միջավայրի ստեղծումը, մտքերը վերարտադրելու,լսելու կարողությունների ձևավորում:

Ամփոփելով աշխատանքը կարող եմ ասել, որ ես հասա իմ առջև դրված նպատակին և խնդիրների լուծմանը: Աշակերտների խոսքի զարգացումը հաջող կազմակերպելու համար անհրաժեշտ է ուսուցման մեթոդների ճիշտ ընտրություն և գործադրում: Ըստ այդմ ես առանձնացրել էի զրույց-բանավեճի մեթոդը և կիրառել հետազոտության ընթացքում:

Յուրաքանչյուր հետազոտություն անցկացնելու համար պետք է առաջադրվեն խնդիրներ, այնուհետև այդ խնդիրների լուծման համար փնտրել հնարավոր տարբերակներ և հասնել ակնկալվող վերջնարդյունքներին:

Գրականության ցանկ

1. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2009,«Զանգակ» հրատ., էջեր 352:
2. Գյուլբուդաղյան Վ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1987, ԵՊՀ հրատ., էջեր 326:
3. Խաչատրյան Գ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Գյումրի, 2008, էջեր 202
4. Հովսեփյան Ս., Աբրահամյան Լ. և ուրիշներ, Խաղանք և սովորենք, Երևան, 2016, «Արմավ» հրատ., էջեր 118:
5. Մանուկյան Ա., Խոսքի զարգացման մեթոդիկա: (IV-VIII դասարանների ուսուցիչների համար), Երևան, 1976, «Լույս» հրատ., էջեր 348: